ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>>

ք.Երևան «14» մայիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինհայ ՊՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում է՝ 2019թ հոկտեմբերի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **27584400 (քսանյոթ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ, որից **4597400 (չորս միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար չորս հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 900052476331	Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01239894
Է. Կիրակոսյան ----------	Ն. Պողոսյան ----------
Ստորագրություն	(ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 1
<< 14> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>>** *գնման պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Ք. Երևան Դավթաշեն վարչական շրջան 1-ին թաղամաս N 49,50,51,52 շենքերի բակի բարեկարգում

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	գմ	508.600	0.692	351.9512
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում / (155.2մ2)	մ³	6.208	3.005	18.6550
3	Խճի շերտի քանդում	մ³	7.760	0.382	2.9643
4	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	գմ	6.000	0.369	2.2140
5	Բետոնե հարթակի քանդում	մ³	1.000	12.444	12.4440
6	Գոյություն ունեցող սեղանի ապամոնտաժում 1հատ	տն	0.025	33.911	0.8478
7	Աղբամանների ապամոնտաժում 4հատ	տն	0.100	33.911	3.3911
8	Նստարանների ապամոնտաժում 8հատ	տն	0.400	33.911	13.5644
9	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	91.291	2.587	236.1688
10	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ³	58.000	0.474	27.4920
11	Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	107.300	1.957	209.9861
12	Խաղասարքերի ապամոնտաժում և վերատեղադրում 6հատ	տն	0.900	90.791	81.7119
	Բարեկարգման աշխատանքներ				
13	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ³	6.132	9.594	58.8304
14	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	գմ	306.600	4.415	1353.6390
15	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ³	4.332	9.594	41.5612
16	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	գմ	433.200	3.969	1719.3708
17	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում բետոնե զեղարվեստական սալիկների տակ	մ³	21.195	9.594	203.3448
18	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	մ³	9.891	24.003	237.4137
19	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ³	7.065	8.915	62.9845
20	Բետոնե զեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	մ²	141.300	3.999	565.0587

21	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ³	151.230	1.707	258.1496
22	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	181.476	4.349	789.2391
23	Բուսահողի փռում ձեռքով	մ²	1008.200	0.288	290.3616
24	Սիզամարգերի տեղադրում	մ²	1008.200	0.127	128.0414
25	Կապույտ ավազի փռում 156.4մ2	մ³	15.640	5.493	85.9105
26	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	378.800	0.635	240.5380
27	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ²	378.800	3.032	1148.5216
28	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	13.000	3.751	48.7630
29	Աբրամանների տեղադրում ամրացումով	հատ	12.000	1.876	22.5120
30	Գոյություն ունեցող զրուցատաղավարների 2 շերտ յուղաներկում	մ²	65.100	0.870	56.6370
31	Միաձույլ ե/բ աստիճանների պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	3.500	57.593	201.5755
32	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.001	273.192	0.1759
33	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.040	281.37	11.2548
34	Թերթապողպատի տեղադրում 80 x80x6մմ, 10հատ	տն	0.003	425.557	1.2828
35	Դյուբել-պտուտակամեխ D12մմ	հատ	40.000	0.312	12.4800
36	Մետաղական անկյունակի տեղադրում 40x40x4մմ, 11.5գմ	տն	0.028	198.198	5.5159
37	Մետաղական անկյունակի արժեքը 40x40x4մմ	գմ	11.500	0.939	10.7985
38	50x30x2.5մմ, 25x25x2.5մմ մետաղական խողովակներից բազրիքների տեղադրում	գմ	5.600	1.888	10.5728
39	50x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	16.500	0.91	15.0150
40	25x25x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	11.700	0.634	7.4178
41	Բազրիքների 2 շերտ յուղաներկում	մ²	4.400	0.870	3.8280
	Էլեկտրալուսավորություն				
42	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3.000	3.226	9.6780
43	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	1.400	0.724	1.0136
44	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.960	2.587	7.6575
45	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	1.600	38.159	61.0544
46	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.051	71.213	3.6262
47	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	4.000	4.469	17.8760
48	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	5.000	10.971	54.8550
49	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	34.000	3.381	114.9540
50	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	5.000	0.776	3.8800
51	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.037	23.95	48.7905
52	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	5.000	20.015	100.0750
53	ԱԲԲԳ 4x16մմ2 մալուխի անցկացում օդով ճոպանով	գմ	168.200	0.946	159.1172
54	ԱԲԲԳ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	գմ	25.000	0.186	4.6500
55	Ճոպանի արժեքը	գմ	168.200	0.208	34.9856

56	Մեկուսիչ SՖ-20	հատ	5.000	0.446	2.2300
57	Մեկուսիչ 'Ընկույզ'	հատ	5.000	0.624	3.1200
	Ոռոգման ցանց				
58	Պողպատե խողովակի տեղադրում Φ51x3մմ փորձարկումով	զմ	62.800	1.614	101.3592
59	Պողպատե խողովակի տեղադրում Φ25x3մմ փորձարկումով	զմ	202.000	0.949	191.6980
60	Խողովակաշարի լվացում վարակազերծումով	կմ	0.265	51.644	13.6753
61	Ոռոգման ծորակների տեղադրում Φ25մմ	հատ	16.000	3.379	54.0640
62	Պողպատե ձեւվավոր մասերի տեղադրում	տ	0.062	1052.717	64.7421
63	Փականների տեղադրում Φ50մմ	հատ	3.000	22.783	68.3490
64	Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ50մմ	հատ	6.000	2.987	17.9220
65	Փականների տեղադրում Φ25մմ	հատ	2.000	3.1754	6.3508
66	Խողովակների 2 շերտ յուղաներկում	մ^2	33.220	0.901	29.9312
	Ընդամենը				9727.839
	Սարքավորումներ				457.161
	Ընդամենը				10185.000
	ԱԱՀ	20%			2037.000
	Ընդամենը				12222.000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Ք. Երևան Դավթաշեն վարչական շրջան 4-րդ թաղամաս N 32,33,34,35,36,37շենքերի բակի բարեկարգում

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	զմ	840.500	0.682	573.2210
2	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում / (48մ2)	մ^3	1.920	2.96	5.6832
3	Խճի շերտի քանդում	մ^3	2.400	0.376	0.9024
4	Բետոնե հատակի մասնակի քանդում 34մ2	մ^3	1.700	12.259	20.8403

5	Կանաչ գորգածածկույթի ապամոնտաժում	մ²	98.500	0.145	14.2825
6	Տաղավարների ապամոնտաժում 1հատ	տն	0.250	33.408	8.3520
7	Նստարանների ապամոնտաժում 12հատ	տն	0.600	33.408	20.0448
8	Աղբամանների ապամոնտաժում 10հատ	տն	0.250	33.408	8.3520
9	Մետաղական ավտոտնակների ապամոտաժում -3հատ	տն	8.400	33.408	280.6272
10	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	122.501	2.548	312.1325
	Բարեկարգման աշխատանքներ				
11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ³	11.400	9.451	107.7414
12	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	գմ	570.00	4.35	2479.5000
13	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում /այդ թվում զրուցատաղավարի-20գմ/	մ³	2.150	9.451	20.3197
14	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /այդ թվում զրուցատաղավարի-20գմ/	գմ	215.000	3.91	840.6500
15	Փայտե ցանկապատի մասնակի նորոգում	մ³	1.200	174.154	208.9848
16	Փայտե ցանկապատի յուղաներկում	մ²	57.000	0.887	50.5590
17	Արհեստական խոտածածկույթ	մ²	98.500	4.508	444.0380
18	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ³	280.050	1.682	471.0441
19	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	336.060	4.284	1439.6810
20	Բուսահողի փռում ձեռքով	մ²	1867.00	0.284	530.2280
21	Սիզամարգերի տեղադրում	մ²	1867.00	0.125	233.3750
22	Կապույտ ավազի փռում 25մ2	մ³	1.250	5.412	6.7650
23	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	289.50	0.625	180.9375
24	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ²	289.50	2.987	864.7365
25	B-15 դասի բետոնից բետոնե աստիճանների իրականացում /նորոգում	մ³	0.500	36.713	18.3565
26	Հատակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ²	12.000	10.482	125.7840
27	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում բետոնե գեղարվեստական սալիկների տակ	մ³	6.780	9.451	64.0778
28	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	մ³	3.164	23.646	74.8159
29	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ³	2.260	8.783	19.8496
30	Գոյություն ունեցող ր նոր տաղավարների բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /30.2+7.5x2/մ2	մ²	45.20	3.939	178.0428
31	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	30.000	3.696	110.8800
32	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	17.000	1.848	31.4160
	Մետաղական ճաղաշար H=1.5մ, L=55.5գմ				
33	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	6.922	3.178	21.9973
34	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	2.886	0.713	2.0575
35	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	7.668	2.548	19.5391

36	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	1.009	9.451	9.5361
37	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-12.5 դասի բետոնից	$մ^3$	3.027	39.868	120.6804
38	Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.054	269.132	14.4092
39	100x100x8մմ թերթապողպատի տեղադրում	տն	0.01267	419.233	5.3130
40	Մետաղական ցանկապատի պատրաստում	տն	0.625	103.585	64.6995
41	76x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	36.32	1.911	69.4152
42	Ամրանի արժեքը Φ6 A500c դասի	տն	0.035	269.132	9.4045
43	40x40x3մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	177.58	0.694	123.2433
44	50x50 d=1.8 մետաղական ցանցի արժեքը	$մ^2$	70.63	0.371	26.2037
45	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	82.738	0.857	70.9065
	Տաղավարների պատրաստում և տեղադրում /3x2.5/մ 2հատ				
46	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	0.700	3.178	2.2246
47	Բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.590	2.548	6.5993
48	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	0.700	39.868	27.9076
49	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.160	269.132	43.0611
50	Զրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 100x100x3մմ մետ խողովակներից, հեծաններ 100x100x3մմ, տանիքային մաս 80x80x2մմ, կավարամած 30x30x1.5մմ, բազրիքաճաղեր 30x30x1.5մմ/	տն	0.760	56.034	42.5858
51	100x100x3մմ մետ խողովակների արժեքը	գմ	44.400	3.246	144.1224
52	80x80x2մմ մետ խողովակների արժեքը	գմ	42.800	1.802	77.1256
53	30x30x1.5մմ մետ խողովակների արժեքը	գմ	116.000	0.548	63.5680
54	Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	$մ^2$	24.000	4.073	97.7520
55	Մետաղական նստարան փայտե նստատեղերով	հատ	4.000	3.696	14.7840
56	Մետաղական սեղան /զրուցատաղավար/	հատ	2.000	2.566	5.1320
57	Զրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	$մ^2$	54.000	0.857	46.2780
	Ոռոգման ցանց				
58	d=76մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	գմ	150.000	0.601	90.1500
59	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	8.000	1.705	13.6400
60	Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	15.210	2.548	38.7551
61	Պողպատե խողովակի տեղադրում Φ51x3մմ փորձարկումով	գմ	237.000	1.59	376.8300
62	Խողովակաշարի լվացում վարակազերծումով	կմ	0.237	50.877	12.0578
63	Ոռոգման ծորակների տեղադրում Φ25մմ	հատ	30.000	3.329	99.8700
64	Պողպատե ծեւվավոր մասերի տեղադրում	տ	0.042	1037.073	43.5571
65	Ոռոգման դատարկման ծորակների տեղադրում Φ50մմ	հատ	6.000	22.445	134.6700
66	Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ50մմ	հատ	12.000	2.943	35.3160

67	Փականների տեղադրում Φ25մմ	հատ	2.000	3.1359	6.2718
68	Խողովակների 2 շերտ յուղաներկում	$մ^2$	41.000	0.873	35.7930
	Ընդամենը				11761.6770
	Սարքավորումներ				1040.3230
	Ընդամենը				12802.0000
	ԱԱՀ				2560.4000
	Ընդամենը	20%			15362.4000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------
(Ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 2
<< 14> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>>** *գնման պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման »

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի հ. 49, 50, 51 52 շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	31.10.2019թ
2	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամասի հ. 32, 33, 34, 35, 36 և 37 շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	31.10.2019թ
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

**

Հավելված N 3
<< 14> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
	45611300		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի հ. 49, 50, 51 52 շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ	9 093 443	9 093 443	12 222 000	12 222 000	12 222 000	12 222 000	12 222 000	12 222 000	12 222 000
2		Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամասի հ. 32, 33, 34, 35, 36 և 37 շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ	11 560 374	11 560 374	15 362 400	15 362 400	15 362 400	15 362 400	15 362 400	15 362 400	15 362 400

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052476331
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
Ստորագրություն՝
Կ.Տ

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------
Ստորագրություն՝
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 14> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 14> մայիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27»*
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«14» մայիսի 2019 թ.**

<<Շինհայ-ՊՈ>>, ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ն. Պողոսյանի, անձնա. ԱՀ 0278897 0508650 տրված 30.10.2007թ 012 կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ____Երևանի քաղաքապետարանի____* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ __"ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27»_____* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /15/11/2020 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀԿՀՀ 01239894

Ն. Պողոսյան _____
(ստորագրություն)

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Շինհայ ՊՈ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 11500716795667

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01239894

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2758440/երկու միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր քառասուն/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ ADM

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/27**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ն. Պողոսյան /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*